11.2.
8.

Ե. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 25 ՅՈՒՆՎԱՐ 1903 — ԹԻՎ 487

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Մանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսի համար 20 սանթիմ կ. երեքին ամէն անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։
Վառնայի համար ձևոք 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ և դրամ դրկել խմբագրութեանս հասցէին.

Редакция на вѣстникъ
„Charjoum"
Varna (Bulgarie)

Redaction du journal
„Charjoum"
Varna (Bulgarie)

R. P. Kalémcarian, Mechitharistengasse W. 4. Vienne
(Autriche)

Արտասահմանի համար ձևոք
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձևոք
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՄԱԿԵԴՈՆԱՑԻՔ ԵՒ ՄԵՆՔ

Աւստրիական, ռուս և ֆրանսական կառավարութիւնները հաստատելով որ Մակեդոնիոյ վիճակը ծանր է, բուլգար կառավարութիւնը որչափ որ էլ ճիգեր թափէ չը պիտի կարողանայ Մակեդոնական ապստամբութեան առջեւը առնել, որոշել են Սուլթանի գերիշխանութիւնը պահել տալով նրան բարոյապէս ստիպել բարենորոգումներ մտցնել Մակեդոնիայի մէջ։ Ֆրանսական գեղին գրքի մէջ տեղ գալովը պարզ երեւում է որ այդ երեք պետութիւնների անհանգստութեան պատճառը ոչ թէ Մակեդոնացիների տանջանքները են, այլ ապստամբութիւնը, որից կարող է աւելի մեծ հրդեհ ծագել։ Մենք մի յօդուածով պարզել էինք որ այդ ապստամբութեան հետեւանքներից աւելի վախենում է Ռուսիան, որովհետեւ հիմա իրեն համար անհնարին է համարուն Մակեդոնական խնդիրը իր ուզած ձեւովը լուծել։

Այսօր մեր այդ կարծիքը աւելի լաւ կերպով հաստատում է ֆրանսական դեղին գրքի բովանդակութիւնը։

Մի խօսքով Մակեդոնիան առանց ապստամբութեան ոչ մի բարիք չի կարող ստանալ Ռուսիայի շնորհիւ. ու Լամսդորֆ եկաւ ոչ աւետիս բերելու Մակեդոնացիներին, այլ կնուտ, ինչպէս արտայայտել էր Բորիս Սարաֆովը։

Մենք չենք կարծում որ Լամսդորֆի կնուտի շողացումը մեծ ազդեցութիւն գործած լինի մակեդոնացի գործիչների վրա. մանաւանդ հիմա, երբ նրա ճամբորդութեան դաղտնիքը բացվել է։

Զմեռը անցնում է, հաւանական է որ ամառը Մակեդոնիան կրկին արիւնհոսութեան թատր դառնայ ու մակեդոնացի ապստամբները եւ թուրք զինուորները սրով և հրով իրար խաչաձեւեն։

Գալիք ապստամբութիւնը որչափ ծաւալ և յաջող հետեւանք կարող է ունենալ, այդ յայտնի չէ, բայց ամեն պարագայում Մակեդոնիայի ազատագրութեան գործը մի մեծ քայլ եւս առաջ կը տանի, որը ի հարկէ շատ ցանկալի է։

Այս բոլոր իրարանցումի մէջ Հայերիս համար ամենաուշագրաւ կէտը այն է, որ Ռուսիա, Աւստրիա և Ֆրանսա իրանց ուշադրութեան առարկան են դարձրել, թէեւ թեթեւ կերպով, միայն Մակեդոնիան. Հայերիս մասին ոչինչ չկայ. կարծես թէ Հայաստանում այլեւս երջանկութիւն և խաղաղութիւն է տիրում։ Ֆրանսայի կիսապաշտօնական «Տան» թերթը անցեալ օր մի նախայօդուած նուիրելով Մակեդոնական խնդրին չեշտել էր որ առանց Հայկական խնդրի մակեդոնական խնդիրը լուծել չի կարելի և եթէ լուծվի էլ մեծ անխոհեմութիւն կը լինի, որովհետեւ հրդեհի հումար կրկին մեծ նիւթ կը մնայ։

Եւ շատ ճիշդ էր նկատել։ Ռուսիան է միայն որ ամեն ճիգ թափում է հայկական խնդիրը թաղել, նրա ջանքերով է որ հիմա մակեդոնական խնդրին կցվաց չէ հայկականը, բայց այդ դեռ չի նշանակում որ այդպէս էլ պէտք է լինի։ Քանի որ հայը գոյութիւն ունի Ծանգկաստանում, քանի որ հայ ցուերը այնտեղ թագաւորում են, հայկական խնդիրը կայ միշտ սպառնական ու հետզհետէ աւելի սպառնացող պէտք է լինի։

Ռուսիան չի ուզում. բայց միթէ հայը հարցնո՞ւմ է կամ պարտաւոր է հարցնել իր տղատութիւնը ձեռք բերելու մասին. ոչ, Որքան Ռուսիան մեր խնդրից փախչի, այնքան մենք այդ խնդիրը նրա քիթը պէտք է կոխենք։ Ինչ ուզում է թող ասի մեր դիւանագէտ Մինասը։ Հայկական յեղափոխութիւնը Ռուսաստանից ոչ մի բան չը պէտք է սպասէ և ընդհակառակը, երբ Ռուսիոյ տհաճութիւնը տեւելի ղօրեղ է արտայայտվում դէպի մեզ։ Իր դէպի մեզ ունեցած ատելութիւնը գագաթնակէտին հասած միջոցին է որ նա մեզ պէտք է աջակցի, առանց ուշացնելու, որովհետեւ հանգամանքները և ժամանակը պէտք է ստիպեն նրան։ Մեզ մնում է միայն այդ ստիպողական ժամանակը և հանգամանքները ստեղծելու զօրութիւնը ունենալ և ճիգը թափել։

ՎԱՐԴՕ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

—o—

Տաս տարի և մի քանի օր անցաւ այն օրից, երբ հողը Կովկասի և ամբողջ հայութիւնից խլեց Գրիգոր Արծրունուն։ Տաս տարին կարճ ժամանակ չէ. բայց այսօր էլ դեռ Արծրունու յիշատակը այնքան թարմ է երեւում հայ ժողովրդի ամէն խաւերի մէջ, որ կարծես թէ դեռ երէկ էր որ մեռաւ այդ մեծ հայը, որը իր կարճատեւ կեանքում մի քանի գործիչի գործ միասին միայն ինքը կատարեց։

Գրիգոր Արծրունի՞,... ո՞վ մեզնից չի ոգեւորվել այդ ժամանակին հրապուրիչ, գգլխելու չափ հրապուրիչ անունով։

Եւ Ռուսահայ ո՞ր երիտասարդ ազատական գործիչը իր գործունէութեան առաջին բոպէում Արծրունուն իր աչքի առջեւ չի ունեցել իբրեւ հասարակական գործիչի լգէալ։ Դամառ Քաթիպա, Ռաֆֆի մեծ մարդիկ են, մեծ օգուտ են տուել մեր ազգային գրականութեան, ազգային ինքնագիտակցութեան զարգանալուն, բայց երբէք իրանց անձով հրապուրելու, իրանցով ոգեւորելու այն մագնիսը չեն ունեցել, ինչ որ ունեցաւ Արծրունին. որովհետեւ իրենց մէջ չէին խտացնում հասարակական գործիչի այն բիւրեղացած անհրաժեշտ յատկութիւնները որ ունէր Գրիգոր Արծրունին։

Այսօր մենք «Բազմավէպ»ից արտատպում ենք «Գաղափարի Մարդին» նուիրված յօդուածը։

Մեր ընթերցողներս թող կարդան, և ուրախանան տեսնելով թէ ինչպէս և կրօնական մարդիկ կարող են ոգեւորվել Արծրունիով։ Միայն էչմիածինը չի ոգեւորվի, որովհետեւ այն տեղ դեղարուեստը և աշխատութիւնը գոյութիւն չունեն. այլ ծուլութիւնը, գողութիւնը և անբարոյականութիւնը։

ՈՐԲԱՆՈՑ

ՏԷՐՏԷՐ ԵՒ ՏԷՐՏԷՐՈՐԴԻ ՄԸ

Ռումանիայէն և Պուլկարիայէն բազմաթիւ նամակներ կը հասնին հոս, որոնցմով տեղեկութիւններ կուզեն Փարիզի գաղթականութենէն. նամակներու մեծը ոչնչով կամ շատ քիչ բանով իրարմէ կը տարբերի. թղթակցութիւնները երկու խնդիրներու շուրջը կը դառնան՝ հայկական որբանոցի մը և հացի խնդրոյն.

Անհաւասիկ մէկ քանի պերճախօս քաղուածքներ.

Նամակ թիւ 1.— ... Արդեօք տասներկու որբերով հասաւ հոդ, Փարիզի հոգեւոր հովիւ աւագ երեց Արժանապատիւ տէր Թադէոս քահանայի որդի տիար Մաքսուտ Փափազեան, որ անուէնն է վսեմաշուք կոմսուհի Քօլլոնայի հիմնած հայկական որբանոցին....

Նամակ թիւ 2.— ... Պ. Մաքսուտ Փափազեան անունով երիտասարդ մը Ռումանիա եկաւ 12 տղաք հաւաքեց Փարիզի Հայ Որբանոցին համար, տղայ գլուխ ալ 5 ական լիրա տուաւ իրը ճանապարհածախս, ճամբորդներէ կիմանանք, որ մեր տղոց անունով, Վիէննայի, Գերմանիոյ մէջ և ճամբուն վրայ ուրիշ դրամներ ալ հաւաքեր է. պղտորեցան մեր մտքերը, որովհետեւ իր բռնած ընթացքը և այլևայլ տեղեկ մեզ հասած լուրերը բոլորովին կը հակասեն իր ըրած խոստումները և մեզի պարզած հոյակապ ծրագիրը։

Պ. Մաքսուտ հետեւեալ կերպով պարզեց Փարիզի հայկական որբանոցի

ծրագիրն ու կազմակերպութիւնը, իր խօսքերովը ձեզի կը ներկայացնեմ.

«Մեծահարուստ և բարեգործ կոմսուհի Քօլլէոնան Փարիզի որբանոցը կը բանայ միմիայն տոքինութիւն մը և բարիք մը գործած ըլլալու նպատակով, այդ գործին պիտի զոհէ իր միլիոնները։

«Որբանոցը դրուած է ֆրանսական կառավարութեան հովանաւորութեան և Փարիզի հայոց հոգեւոր և մայրաւոր իշխանութեան հսկողութեան ներքեւ։

«Միլիոններով և անթիւ կալուած. ներով (աքարէթ) ապահովուած է ընդմիշտ որբանոցի ապագան.

«Եւրոպական և զուտ հայկական կրթութիւն մը պիտի տրուի որբերուն, կարող և նշանաւոր ուսուցիչներու ձեռքով»։

«Քսան տարի պայմանաժամով պիտի որդեգրուին որբերը. այդ ժամանակը լրանալէ ետքը, իւրաքանչիւր տղայ դուրս ելած միջոցին, իր կրթութեան հետ պիտի ունենայ նաև որոշ դրամագլուխ մը ձեռքը։

«Որբերու ապագայ դրամագլուխը պիտի գոյանայ հետեւեալ կերպով։ Բէնէֆիշիրտ կոմսուհին իւրաքանչիւր տղու ճնունին, շարաթական 4-5 ֆրանք կառավարութեան խնայողական սնտուկը պիտի ձգէ, ուրկէ 20 տարի ետքը, որբերը բաղդրեալ տոկոսով պիտի ստանան. այսպէս տղաքը պատրաստի նախնական դրամագլուխ մը պիտի ունենան, իսկ աղջիկները աղուոր դրամօժիտ մը։

«Բարձրագոյն կրթութեան սէր ունեցող տղաքը, Որբանոցի ծախքով պիտի գրուին համալսարանները»։

Պ. Մաքսուտ մեզի ցոյց տուաւ Սէնի եզերքին վրայ բարձրացող հոյակապ որբանոցին յատակագիծը իր ամարանոցով, ձմերանոցով աւազաններով և պարտէզներով. մեր Պուքրէշի Քօլցի հիւանդանոցէն քանի մը անգամ մեծ պիտի ըլլայ հայ որբանոցը։

Խնդրեմ մանրամասն տեղեկագրեցէք։

Նամակ թիւ 3.— Կը լսեմ որ հոս վանցի խոհարարներ կան. պարոն Մաքսուտ հոս (Պուքրէշ) եղած ատենը կըսէր թէ փոխանակ հոս չանալու աշխատելու և ճնօթի մնալու, կըրնամ հոս առնուազն 20 ֆրանք չահել օրը, ես 18 ֆրանքով ալ գոհ կըլլամ, շուտով ինձի տեղ մը գտէք։

Վերջապէս հացագործներ, վարժապետներ, կօշկակարներ, քօլաճիներ, հաւկթավաճառներ, սափրիչներ. տիրացուներ իրաց առեալ տէրտէրներէ, պ. Մաքս. Փափազեանի, կախարդող խօսքերէն հրապուրուած և անոր բարձր պաշտպանութեան վստահող Փարիզ թափել կուզեն ֆրանսական կարմիր լիրանոր դիզելու թեթեւ եւ քիչ աշխատութիւնով։

Տեղ դիմողներուն յօդուածով մը պիտի պատասխանենք։

Տասներկու որբերու Փարիզ հասած ըլլալը հայ գաղթականութիւնը տեղեակ չէ. բայց մենք լսացած ենք որ հասած են Նուազի լը Կռան ըսուած տեղը եւ այդիի մը մէջ վարձուած տան մը մէջ կապրին։

Տէր Թադէոսը Փարիզի հայոց հոգեւոր հովիւ չէ, աւազերեց քահանայ չէ. հայոց մատրան մէջ պաշտօն չունի, հայ եկեղեցին երեք տարուան մէջ երկու անգամ մատած է միայն, ան ալ իբր ժողովուրդ աղօթելու։ Հոգեւորական իշխանութեան հրամանով Եւրոպայի հայ գաղութներու մէջ քահանայագործելու ալ իրաւունք չունի տէր Թադէոսը։

Ճամբորդէ մը մենք ալ իմացանք, որ պ. Մաքսուտ որբերու անունով դրամներ հաւաքած է իր ճամբուն վրայ, Նոյնիսկ Մխիթարեան հայրերը զարկած է։

Տիկին Կոմսուհիի մասին շատ անբնաստ տեղեկութիւններ են մեր մինչեւ հիմա քաղածները, բայց էն հաստատը սա է, որ ո եւ է հարստութիւն չունի հիտեւաբար զոհելու համար ոչ են։

Փարիզի հոգեւոր հովիւ Տէր Վռամշապուհ քահանան մերժած է այցելել եւ տեսնել որբերը. մինչեւ որ կոմսուհին հայ եւ ֆրանսացիներէ կազմուած խնամակալութեան մը հսկողութիւնը եւ քօնթրոլը չընդունի.

Կոմսուհիի վարձած տունը ոչ կառավարութեան հովանաւորութեան ոչ ալ տեղւոյս թաղական խորհուրդի հսկողութեան տակ է։

Որբանոց ըսուածը ոչ կալուած ոչ իսկ չնչին դրամագլուխ մը ունի.

Զեռնարկուած է գործին յոյս դրուելով հայ հարուստներու եւ եւրոպացիներու ղրամական օգնութիւնը վրայ։

Տղայոց ապագայ դրամագլուխը ցնորք մ'է որ իբր միջոց գործածուած է մեր ծակաչք եւ սգահ հայծնողները հրապուրելու համար։

Յատակագիծը Պուքրէշի մէջ տեսնող հոս ալ որբանոց ըսուած տունը այցելող ակնատեսը բոլորովին հիասթափուած կըսէ «փայլուն ապագայի մը յոյսովը յանձնեցինք մեր զաւակները, բայց խաբուած ենք Մաքսուտի ճարպիկութիւններէն»։

Կը զգուշացնենք Վանցի խոհարարը, հոս գալ ուզող հացագործները, վարժապետները, կօշկակարները, քօլաճիները, հաւկթավաճառները, սափրիչները եւ տէրտէրները բացի տիրացուներէն տեղերնուն երերալ։ Պ. Մաքսուտը հոս եթէ կուշտ փորով հաց գտներ, իր հունձքը ընելու համար՝ մինչեւ Ռումանիա չէր երթար։

Հոս ինկողը ալ դուրս չի կրնար ելլել, կենդանի օրինակներ ունինք այս միջոցին աչքի առջեւ։ Մաքսուտի յանձնուած օր. Արշալոյսի հայրը, Պօլոս աղա Սանտալճեան, Մաքսուտի ապուինած քայքայուելով հոս եկած է իր տիկնոջ հետ, աւելի ազէկ գործի մը յոյսով։

Երբեմն իվեր կաչխատի ճամբու ծախս մը ճարել Պուքրէշ դառնալու համար և չի յաջողիր։

Փարիզի Բարեգործական ընկերութիւնը կազմուածուած վիճակի մը մէջ է. Թշուառին վերջին յոյսը հանգանակութիւնն է, բայց ո՞վ կուտայ

Սիրտ ունեցողը դրամ չունի,
Դրամ ունեցողն ալ սիրտ չունի։

ՍԻԼԼԷ

18 յունուար
Բարիզ

ՄԻՆԱՍ ՁԵՐԱՁԻՆ

Ալ'Ամէնիի վերջին թիւի նամակատուփով դուք ուզում էք հերքել որ Մակդա—Նէյմանի մատնիչական բերբոշիւրը Գրիգոր Նիկողոսեանի ուղեղի արդիւնք չէ, յայտարարելով որ Մակդա Նէյման դերման հրապարակիս է։

Ոչ, Մինաս աղբար, Մակդա Նէյման Գրիգոր Նիկողոսեանի «բար՝ կամուհին Հ»։ այդ գիրքը գրել է այդ շալիէի թելադրութեամբ, իր բոլոր զրպարտութիւնները ու մատնութիւնները Գրիգոր Արծրունու, Գրիգոր Զանչիէվի և Ռուսահայ յառաջադիմական տարրի մասին, յենում է նոյն Գրիգոր Նիկողոսովի բերանացի վկայութիւնների վրա։ Ձեր «կօնֆրէր» Միմէօն Հախումեանը, այդ բարի ծաղիկը, որ ձեր թարգմանի համար թարգմանել էր Գրիգորի յօդուածը, ձեր խնդրանքով կարող է թարգմանել այդ գրքի մատնիչական մասը, և դուք կը համոզուէք մեր ասածների մէջ։ Գրիգոր Նիկողոսեանը քաջութիւն չի ունեցել իր անունը դնել իր վատ գրքի և մտքի արտայայտութեան տակ։ Հապէսպար, էֆէնտիմ։

Յետոյ, Ներնաս աղբար, դուք անպատկառօրէն սուտ էք խօսում երբ հոչակում էք թէ մեր թղթակից «Մոսկվացու» նամակը ժնէվում է իմրագրված։ Դիտենք «Պրօ Արմէնիայի» հրեան զալուց յետոյ ժընէվը ձեզ շատ ատելի դարձաւ։ բայց այդ ատելութիւնը ձեզ իրաւունք չէ տալիս սուտ խօսել և Մոսկվացուն ժընէվ տանել։ Բայց ինչպէս ե՞ր եւ ում է դուք ամէնքին էլ ձեր արշինով էք չափում, այսինքն ձերմասին ուրիշ անունով գովասանքներ գրկել թերթերին կամ Պարսից շահից ստացած նշանի խնդիրը պարզել... նշանը որ ձեզ համար ահագին նշանակութիւն ունի։ Զէ՞, աղբար։

Բայց և այնպէս պարոն դուք էլ եկաք հաստատեցիք որ իսկապէս Զորանեան, Փորթուգալեան, Հախումեան և Բամֆեան ժահմարովից օգտվել են, իսկ նոր Դարի խմբագիրը 5000 բուբլի է ստացել։ Դուք ուրանում էք ձեր ստացածը, թերեւս միայն ճաշով էք բաւականացել...

Յետոյ դուք ինքներդ հաստատում էք որ ժահմարովը կարծածի չափ լաւ մարդ չէր, չը նայելով նրա այս այն կողմը նետած դրամին։

Դուք ասում էք որ ժահմարովը անոր Դարի խմբագրին 5000 բուբլի է նուիրել. իսկ «Մշակին» մենք կասենք և Արծրունուն չէր համակրում։ Արծրունի և Սպանդար երկու հակառակ տիպեր են. Արծրունին Կովկասի հայութեան իդէալական տիպերից է, իսկ Սպանդարը սմենավատ։ Սրան համակրողը շատ լաւ չէր կարող լինել։ Նոյն իսկ եթէ ամբողջ կարողութիւնը հայ որբերին նուիրէր։ Բայց մուրացիկների համար ինչարկէ դրամն է որ մեծ արժէք ունի։

Դուք, Մինաս աղբար գովեստ էք կարդում և Օրման փաշային, խնդրեմ ասացէք, բարոյական ի՞նչ դաւանութիւն ունէք դուք...։

Խմբագրութիւն

ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՐԴԸ

Այսօր երբ Եւրոպան Կաղանդի քնքուշ մաղթանքներով զբաղած է, հայը ունի ուրիշ պարտականութեան մեծ տօն մը, որուն կը մասնակցի հայկական այն մեծ զանգուածը, որ երկրպագու է ազատ մտքի և ազատ գաղափարի այն ամէն անձնաւորութեանց՝ որոնց գլուխն է Արծրունին։ Եւ այս օրուան հայկական տօնը անոր յիշատակին նուիրուած է. այսօր կը տօնուի այդ մարդուն մահուան տասնամեակը. մենք չենք գիտեր թէ Թիֆլիսի «Էջ ինչ հանդէս կը կատարուի. չենք գիտեր թէ ի՞նչ արժանաւոր ցոյցերով հայութիւնը իր պարտաճանաչութեան մէջ վեհ կը գտնուի. չենք գիտեր թէ միանամուռ խնդավառութեամբ կը տարբերի՞ն գրական և հասարակական հանդէսներ։ Դեռ Ռուսաստանի մամուլը կանխապէս այդ տօնին առթիւ որոշ բան չ'յայտնեց։ Բայց գիտենք որ անանյիշատակ պիտի չանցնի։ Մէկ տարի առաջ Պ. Տ. Նազարեանց կը հրատարէր հայութիւնը, որ մտնարձանով մը անմահացնէր Արծրունին յիշատակը. և այս ի՞նչ ելք ունեցաւ. տակաւին քան չէ՞ք գիտեր. բայց եթէ անոր գործադրութիւնը տնորոշ՝ որոշ է սակայն ուրիշ յուշարձանի մը գոյութիւնը. և այդ Լէօյի կենսագրական հատորներն են, ուր նկարագրուած է Գ. Արծրունիի լայնածաւալ գործունէութեան պատմութիւնը։ Ահա՛ այս է մեծ մարդուն յիշատակին յաւերժական գրական կոթողը, որ աւելի ընտրելի և նախամեծար է, քան անմռունչ ցուրտ մահարձանը։ Բայց Ռուսահայք աւելի սիրահար են քարէ կոթողներու՝ քան թէ գրքէ... Եւ դաղափարի ազատութիւնը յարգելի է միշտ. թող անմահանան մեր մեծ գործիչները. տաղանդաւոր դէմքերը և հանճարեղ մատենագիրները. փոյթ չէ անոնց մահարձանին քարէ կամ փայտէ ըլլալը։ Միայն ցանկալի է որ խանդավառութիւնը որ կը տածուի դէպի պաշտելի գլուխները, չմարի՛ կոթողներու կանգնումէն յետոյ. գտնացած՝ այս մաղձոտ մաղթանքը ընելու պարտականութիւնը կը զգանք, յիշելով Ռաֆֆիի մօր այն բողոքանքը՝ որով կ'ողբերգուէր մեծ վիպասանին մոր ծայրագոյն թշուառ վիճակը։ և սակայն ինչ որ կը յիշենք, հայութիւնը մահարձան մը կանգնեց Ռաֆֆիի դիակին հողակոյտին վրայ. յետո՞յ, յետոյ իր անտարբերութեամբ ահա լսել տուաւ Ռաֆֆիի մօր այդ մուրացկան աղերսագիրը։ Ուրեմն մինչեւ ո՞ւր կը հասնի մեր տաքուկ եր։ խստապիտութիւնը..

*
**

Բայց այսօր սեւ ու սգաւոր յիշատակներու ժամանակը չէ։ Ասիական գաղափարները նուսհող մեծ դիցազին յիշատակը չպղտորենք մեր հոգեկան պատմութեան տխուր էջերովը։

Տասը տարի առաջ երբ «Մշակ» կը

թեւակոխէր իր քսանամեակը, անոր հիմնադիրը Արծրունին՝ խմբագրականով մը մեծ գոհունակութեամբ ինքզինքը վարձատրուած կը համարէր։ Ան իր բաղմաեայ գրական գործունէութիւնը պսակուած կը տեսնէր. և ի՞նչպէս. կարելի՞ է որ մեր մէջ գրական գործիչը վարձատրուի, մխիթարուի, պսակուած տեսնէ իր մաշած ղլուխը. այսպիսի բան մը կատարեալ հրաշք է. և մենք այս ճշմարտութիւնը սքանչանալով տեսած ենք. մենք Արծրունիին հետ համահաւասար խայտալով կը գովենք այդ անզուգական երախտիքը. դրուատելի հասարակական երախտիք մըն էր այն. զոր կը պարզէր Արծրունին իր «Մենք մեզ վարձատրուած կը համարենք» խմբագրականովը։ Տասը տարի առաջ կը կրէր Արծրունին.«... Ուրախալի է շատ, երբ մարդ զգում է թէ իրանից յետոյ հետք է թողնում, վարձատրուած է համարում իրան՝ այն մեռնարկութիւնը կամ հաստատութիւնը, որը գիտէ թէ սնուցել է մի հաստատ, ոչ դպրոց, և որ ինքն դադարելուց յետոյ էլ՝ դպրոցը կը շարունակէ գոյութիւն ունենալ, կը շարունակէ նոյն ոգով ներշնչուիլ, նոյն մտքերը տարածել ժողովրդի մէջ նոյն ուղղութեամբ գործել նոյն չափով ընթանալ։— Անուրանալի է որ «Մշակ»ը ստեղծել է մի դպրոց, մի շկոլա. և այն էլ մի շատ ընդարձակ շկոլա որն ունի իր բազմաթիւ ներկայացուցիչները հասարակութեան բոլոր դասակարգերում»։—Եւ հայկական ասպարէզ մուտք գործող, քայքայող այդ շկոլայի հիմնադիրն է այս տողերը գրողը։

Ի՞նչ էր այդ շկոլան։

Գանգատներով համախմբուած մարմին մը, որոշ ուղղութիւն մը, համոզում մը ունեցող. մտքի ազատութեան դրօշակիր. եղբայրութեան համերաշխութեան քարոզ՛չներ՝ սփռուած Հայաստանի ամէն գիւղ ու քաղաք։ Եւ այդ առաքեալներուն վառարանն էր «Մշակ»ը՝ Արծրունիի թերթը, ուրկից կուռակցութեան անգամները կ՛ընդունէին ասիական ստրնուժիւնները կիզող։ փճացնող կրակ, և կայծ արծարծող համաշխարհային միութեան։

Արծրունին «Մշակ»ի քսաներորդ տարուան մէջ թեւակոխելուն՝ վարձատրուած կը համարուէր. և աւելի միխիթարուած ու սփոփուած, կը խոստանար «աւելի էլ մեծ յոյսերով կը մտնենք մեր գործունէութեան 20-րդ տարեշրջանը, աւելի էլ ոգեւորված եռանդով կը շարունակենք գործել և ապագայում»։

Բայց ապագան անգութ էր և անգութ եղաւ դաղափարի այդ մեծ մարդուն, այդ հերոս հրապարակագիր տաղանդին։ Այն տարին որ ան կը խոստանար աւելի հզօր ոգեւորված եռանդագին գործել ու գրել, նոյն տարուան օրհնական օրերուն, կը մարի այդ դաղափարի փարոսը։ «Մշակ»ի մեծ ընտանիքը կը կոյանչէ իր Հայրը. բնական է ցաւը խորտակող էր և չլատող։

* * *

Սառնամանիկ եղանակն է, սառ է ամէն կողմ եւ սառած ճակատագրի գիութիւնն ալ. Թիֆլիսի մէջ, 1892 դեկտ. 26ին (Հ. Տ.) երիտասարդներ սեւ արտասուք աչուընին՝ յուղարկաւորութեան քայլերգին մաղձոտ օրօրներով, դողդոջուն ուսերնուն վրայ դիակ մը առած, Խոջի-վանքի կերեզմանը կը դիմեն. սովորական մահկանացու մը չէ ան որ դերեզման կիջնէ. անոր հոդին եւ մոխրին հետ յիշատակը պիտի չսպառի. դիակը «Մշակ»ի խմբագրութեան մատներով հիւսուած դափնեպսակ մը ունի իր կլխին եւ ձեռքը «Մշակ»ի մեծ տուգին համարը. պարզ, անկեղծ ոգերկրպու արտայայտութիւն մը, որ միայն անխարդախ դաղափարի պարագլուխ Արծրունիին սեփական էր։ Թիֆլիսի շուկաները սովորական յուղարկաւորութեան մը հանդիսատես չեին ըլլար. հոյակապ կուսակցութեան մը հիմնադիրը բնական էր որ նոնսովոր եւ եզական ցոյցերով անմահանար. Թիֆլիս ելտխտագիտական դղրդեցուցիչ յուզման մէջ է. յարգանքի եւ պաշտումի տեսարանը աննման էր «տեսարան որի նմանը Թիֆլիսը երբէք չէ տեսել եւ գուցէ երբէք էլ չի տեսնի» ըստ Արծրունիի անդրանիկ սանիկին բայսարութեան։ Յուղարկաւորութիւնը կը յիշեցնէ Արտաչէս Բ.ի թաղման հանդէսը. միայն այս տարբերութեամբ որ Արտաչէսի եղերամայրերը կեղծ՝ իսկ Արծրունիներն անկեղծ էին։

Եւ ինչո՞ւ այսքան դերազանցօրէն բարձր ոգեւորում։ Զարմանք չէ։ Օրինաւոր էր եւ շատ բնական այդ եզական խանդավառութիւնը։ Ո՞վ էր յարգանքի արժանացողը. ո՞վ էր այն հանգուցեալը. մենք լսինք որ ան սոսկական մարդ մը չէր. Ռուսահայերը ունեցեր են սիրելի տաղանդներ, գործիչներ. բայց Արծրունիին գործը աւելի հմայիչ էր, աւելի ընդարձակ. անոր գործը դաղափարի մեծ յեղափոխութիւնն է, որուն արշաւող ալիքները հասան նոյն իսկ մինչեւ Պոսֆորի ափունքը, ու փչրեցին հայկական կաչկանդուած մտքին պարիսպները. Օրթաղեղցի քնարերգու Պէշիկթաշլեանի «Եղբայր եմք մեք՝ մեզ՛անոյշ նրուագին հետ, ներդաշնակութիւն կը կազ՛էր Արծրունիի մոնչող գրիչը, որ կը սպառնար կռիւ, հալածանք եղբայրասպան վատ հոգիներուն։

Անհունապէս վեհ ու հանդիսական էր անոր յուղարկաւորութիւնը։ Ուիր կառք պսակներով ծանրաբեռնուած կերթան անոր պատգարակին առջեւէն։ Ան հարո՞ւստ էր, միլիոնատէ՞ր. ազգին ի՞նչ կտակ թողուց. ահա բնական հարցեր։

Այո՛ ան աշխարհ գալուն հարուստ էր եւ մեկնելուն մոխած էր հարստութիւնը. օրոցքէն վար իջնելուն՝ ան Ասիացի զաւակ մ'էր, իսկ գերեզման մտնելուն համաշխարհային դաղափարի գլուխ մը... Այո ան մոխած էր իր հարստութիւնը, ան հարուստ չէր. անհատական հաճոյքի, մոլութեան եւ ախորժ կլափը չընկաւ իր ժառանգական հարստութիւնը. այդ մոխումը ազգային նուիրական մեծ գործին համար եղած էր։ Ան մոխեց իր ստակը, իր հարստութիւնը իր «Մշակ»ին համար. որ էր իրեն ամենէն թանկագին կտակը։

Անոր կտակը յօգուտ մտքի չքաւորներուն... «Մշակն» էր, կտակ մը գերազանցապէս շահեկան, համազգային թանկագին տոկոս։

Եւ կտակը անծանօթ չէ. ան ըրնջուած չէ։ Ու այսօր. երբ սարսափահար կը լսենք այդ կտակին դէմ սոսկալի թիխար մաքառում մը, կարժէ որ անոր ձայնը հնչեցնել տանք կտակարարին այն մեծ խուժին որ անհունապէս ստուարացած է։ Կարժէ որ «Մշակ»ի ամէն համակիրները լուրջ նկատողութեան առնեն լրագրական այդ սրբազան սիպիլլան։

Այն օրը, երբ «Մշակ» իր հիմնադրի մահը կոդբոր. կարտասուէր, երբ խմբագրութեան ամէն անդամ հեկեկանքով կը դրուատէր մեծ հանգուցեալին անդարմանելի կորուստը, որուն լալահառաչ սգաւոր վայնասունին մէջ սրտագրաւ սփոփանքի ձայն մըն ալ լսեցինք՝ այդ «Մշակ»ի ապագայի խնդիրն էր. այն ձայնը Արծրունիի անգիր կտակն էր։ Խմբագրութիւնը կը յայտարարէ.

«Իրիզոր Արծրունին, դեռ իր կենդանութեան ժամանակ, շատ անգամ ասել եւ կրկնել է. որ իր մահվանից յետոյ, ամենամեծ յարգանքը, սէրը եւ պատիւը, որ իր աշխատակիցները, կուսակցութիւնը, բարեկամները եւ վերջապէս հասարակութիւնը իրան ցոյց կը տան, դա կը լինի «Մշակ»ի անընդհատ շարունակութիւնը, նոյն ոգով, նոյն ուղղութեամբ, եւ նոյն տենդենցիաներով։—Եւ ահա ամենամեծ հայ պուբլիցիստի այդ սրբազան կտակը մեզ վրայ դնում է պարտականութիւն, առանց մի բոպէ տատանվելու, առանց մի վայրկեան վհատելու շարունակել նրա սկսածը, կենդանի պահել «Մշակ»ը եւ այդ «Մշակ»ի մէջ ցոլացնել հիմնադրի փայփայած դաղափարները եւ ձգտումները»։

Եւ խմբագրական մարմինը հաւատարիմ մնաց այդ կտակին. ան, հիմնադրին պէս յամառ աշխատութեամբ մինչեւ այսօր դեռ յառաջ կը վարէ այդ դուրդուրալի աւանդը։ Խմբագրութիւնը յարգեց լրագրական այն սուրբ կտակը։ «Մշակ» իր հիմնադրին օրով շաբաթը երեք անգամ կը հրատարակուէր, իսկ այժմ ամէն օր, նաեւ կիրակի օրեր։ Ուրեմն «Մշակ»ը ոչ միայն կանգ չառաւ, այլ ընդհակառակն արշաւեց։ Դէպի մեծ հրապարակախօսը՝ խմբագրութեան յարդանքը կատարեալ էր, անոր կտակը պատկառանօք գործադրուած։

* * *

Յարգելով այդ կտակը, անմահ կը մնար Արծրունին։ Խմբագրութիւնը յարգեց. յարգեց նաեւ կուսակցութիւնը եւ յարգեցին բալեկամները։ Պէտք է շարունակել այդ յարգանքը։ Պէտք է տարածել այդ յարգանքը։

Պէտք է յարգել դաղափարի մարդուն յիշատակը. պէտք է յարգել անոր կտակը։ Եւ ի՞նչո՞ւ. այսքան անհամեմատ հրապոյր, համակրանք դէպի Արծրունին։

Արծրունին վիթխարի մատենագիր մը չէ, ան նիւթական մեծ հարստութիւն մը չթողուց հայ ազգին։ Ան սովորական միջակ մատենագրի մը համբաւով իջաւ հող։ Բայց երբ իր հասարակական գործունէութիւնը նկատողութեան կառնենք, մեզ համար ան ամենէն տաղանդաւոր մատենագրէն եւ ամենամեծ բարերարներէն ալ վեր է եւ շատ բարձր։

Կը յարգենք այդ դաղափարի մարդը.

Վասնզի ունէր ան յատուկ բարեշրջող վարդապետութիւն, դաւանանք որով երիտասարդութեան մէջ կազմակերպուց ժողովրդեան շահերուն պաշտպան գիտնական եւ կրթական կուսակցութիւն մը, որ կռուեցաւ ու նուաճեց սարսուկ մտքերու խաւար աշխարհը։

Կը յարգենք այդ դաղափարի մարդը.

Որ հայ անհատը ցնցեց, անոր ներշնչեց անձին, հասարակութեան եւ ամբողջ մարդկութեան օգտակար ըլլալու վսեմ քարոզներ. հայ «Ֆէմինիզմի» ամենէն պատկառելի եւ հզինակաւոր ջատագովը եղաւ։ Պաշտպանեց հայ կնոջական մտաւորական, քաղաքական ու հասարակական զարդացումը. միայն արական դասակարգի յառաջդիմութեամբ, հայկական զարդացումի անիւը կիսկը մնար. ան պէտք էր ամբողջանալ ֆէմինիզմի խնդրով. դաւար հասակէն պատերազմ մղեց կանանց խաւարամիտ կացութեան դէմ. նախ դիմադրութիւն-յետոյ յաջողութիւն։ Ֆէմինիզմի խնդիրը արծարծեցաւ. սրամտումը միխիթարական էր. Եւրոպայի մէջ ահա հայ ուսանողուհիներ բժիշկ, փաստաբան, դաստիարակ եւ այլն... Եւ այս-Արծրունիին քարոզներուն արդիւնքն էր։

Կը յարգենք այդ դաղափարի մարդը.

Որուն մտածութիւնը անսահմանափակ աշխարհակալ բարիքի, գուսաւորութեան զարթումի ձգտում ունեցեր է. գերագոյն ձգտում մը, որ դարձեալ կը կեդրոնանայ հայ անհատի, ընտանիքի եւ ամբողջ հայկական զանգուածին զարդացման եւ երջանկութեան միակ օգտին համար։

Կը յարգենք այդ դաղափարի մարդը.

Որ Հայաստանի ընտանիքին ներքին դաղանային կռիւներուն ջլատող հարուածներ տուաւ. անմիտ կռիւներու դէմ խելացի եւ բարեկարգ կռիւներ մղեց։ Անիմաստ համազգային միամիտ անյա՛ւները անգթօրէն յօշոտող մոլեռանդութեան վիշապը՝ անշնչացաւ դաղափարի մարդուն քանդող լախտին տակ։ Եւ այս միայն բաւական էր՝ որ այն համազգային մեծ համակրանքի արժանանար արդար իրաւունքով։ Ծրեւակայեցէք սա խաւարակուռ հոգ՝ ընտանիքները ուր չէ հնչած եղբայրութեան երգը, ուր չեն թափանցած համերաշխութեան արեգին ճառագայթները. մտէք դուք հոն. կը տեսնէք եղբայրասպան ոճրագործներու դիակներ, ապականութիւն։ Երեւակայեցէք դուք որ օր մը ժոլեռանդութեան վիշապի գլխէն հեռանայ համերաշխութեան ջախջախող լախտը. պէտք է համոզուիլ որ դաղանը իր առաջին նախճիրները ձեռք առնելու համար ուժ ունի. ան պատրաստ է կեղծ ընտանութեամբ մեր ամբողջ հայկական մարմինը կլլելու փճացնելու եւ մեր փոշին մեր սգաւոր աւերակներու վրայ ցանելու..

Յարգելով դաղափարի մարդը, կը յարգենք իր կտակը. որով ուժ կուտանք ազգաշնորհ, ստեղծող ու շինող գործին. կամրապնդենք համերաշխութեան չկիան։

Եթէ սիրելի՛ է Արծրունին...

Կենդանի. միշտ կենդանի ձգահենք իր կտակը։

Այս է միայն տաղանդաւոր Դաղափարի մարդուն միակ վարձատրութիւնը։

Հ. Ս. Երամ.

«Բանվոր»

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱՆ

—o—

Այսօր, «ՎԷՍԷԼՕ» խումբը, իր վերջին ներկայացումը տալով. պիտի մեկնի դէպի Ռուսաստան։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին ներկայացնել Միացեալ հնչակեանութեան կեդրոն. վարչութեան հին Հնչակեան հաւատարիմ մասնաճիւղերին ուղղված շրջաբերականի վերջին մասը, որով յայտնվում է Արզուեանի, Շահրիմանի և Դրիզորեանի արտաքսումը։

Ամբաստանագիր շրջաբերականը կազմուած է 25 յօդւածներից։

Մենք կ'սկսենք 20րդ. յօդւածից։

20. Նկատելով որ Ա. Գ. և Շ. այս բոլոր յանցանքներից զատ վերջերս դիմել են նաև քրէական յանցանք գործելու իրենց արժանի միջոցին-խարդախութեամբ խաբէութեամբ վարպետին կուսակցութեան բնակարանի և նրա հասցէով կնիք պատուիրելով, իբրեւ թէ առաջուանը կորցրել են և նորաթուխ կեղծ կեդրոնը տանելով։

21. Նկատելով այնուհետեւ, որ Արզուեանին հրապարակով մամուլի մէջ ամբաստանեցին թէ նա յեղափոխութիւնը Փարիզի տաճկաց դեսպան Միւնիր բէյին վաճառելու համար բանակցութիւնների մէջ է մտել, մատնիչի դեր կատարելով այսպիսով տաճիկ կառավարութեան մօտ։

22. Նկատելով որ 96 թուականին նոյն Արզուեանին վերակազմեալները արտաքսել են իրենց միջից իբրեւ դրամաշորթի և զանազան չեղծումներ կատարողի, որ նա մի ֆրանսուհի ձեռք բերելու համար 500 ոսկի (հինգ հարիւր) է ծախսել կուսակցութեան գանձարանից (նախկ. վերակ.)։

23. Նկատելով որ այս ահաւոր ու սոսկալի ամբաստանութիւնները ոչ մի բառով հերքելու փորձ չէ արել ամբաստանեալը բացարձակապէս ցոյց տալով որ լռութիւնը համաձայնութեան նշան է. հետեւաբար ճշմարիտ են բոլորը։

24. Նկատելով որ ամբաստանող պարոնը այժմ իւր իսկական անունով հրապարակ է եկել, ընկերական տեսան է հրաւիրում. Արզուեան „հերոսի“ դեռ չատ դաւաճանութիւնները ու ոճիրները վաւերաթղթերով ապացուցանելու համար, այն ինչ ամեն տեսակ արգելքներ են յարուցանում ամբաստանող պարոնին լռեցնելու համար։

25. Նկատելով վերջապէս որ Շ. մի ուրիշ անձի հետ մատնութեան նամակ է գրել Բուլկարիայէն տաճկաց կառավարութեան որ ինքն էլ խոստովանում է բացատրելով սակայն թէ նամակը ինքը չէ խմբագրել. այլ միայն սրբագրել է։

Այս բոլոր նկատումներով Ա. ին, Գ.ին և Շ.ին հաւաքաբար դատապարտում ենք 1) ընդհանուր յեղափոխական տեսակէտից՝ որպէս խաչագողների, պորտաբոյծների, յսկ. շահագործողների, հայի խնդրի համար ամեն տեսակ ստորութեան և խարդախութեան ընդունակ կեղծարարների, բ.) Հնչ. կուսակցութեան շահերի տեսակէտից՝ որպէս դաւաճանների, անհաւատարար։ 2 ա) Արզուեանին իբրեւ տաճկաց լրտեսի և յեղափոխութիւնը վաճառելու համար բանակցողի։ բ) Շահրիմանին որպէս մատնիչի, և Գ. Վ. Դրիզորեանին կուսակցութեան գանձարանը կողոպտողի։ Զրկում ենք նրանց թէ կուս. կեդ. վրչ. և թէ դուրսը որ և է պաշտօն վարելուց, ինչպէս նաև հնչ. կուս. Մասնաճիւղերի հետ որ և է թղթակցութիւն և յարաբերութիւն ունենալուց։ Իսկ կուսակցութիւններից ընդ միշտ արտաքսելու վճիռը թողում ենք կուսակցութեանս պատգ. ժողովին։

Հնչ. կուս. կեդր. վարչ. կոչմից։

Ատենադպիր Ատենապետ
Հայկազունի Ա. Սագունի

(ԿՆԻՔ)

1902 5 դեկտ.
Լօնտօն

Սիրելի ընկերնե՛ր.

Վերջերս հաստատ աղբիւրներից իմացանք, որ յիշեալ անձինք իրենց դաւադրական դաւաճանական միտքը իրագործելով, կեղծ Հնչակ են հրատարակել Լօնտօնից դուրս Փարիզում. ցրուել են կամ երեւի շուտով կը ցրուեն։ Օրանով զգուշացնում ենք բոլոր հնչ. Մասնաճիւղերին, ընկերներին և առաջարկում յանուն կուսակցութեան շահերի և պատուի ոչնչացնել դաւաճան մտքերի այդ անարգ արտադրութիւնը և թոյլ չ'տալ որ 96 թուականի խայտառակութիւնը նորից կրկնուի։ Վերստին յայտարարում ենք որ կուսակցութեանս հասցէն մնում է նոյն։

Նոյն

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պատրիարքը զարնող երիտասարդին դաւը պիտի տեսնուի այս շաբաթ օր.

— Մինաս Չերազ իր թերթին մէջ ահագին ներբող մը կը կարդայ Օրմանեանի և կանիծէ զայն պատժողը։ Չերազ խելքը ետ տուեր է ինչպէս կերեւի։

— Թիֆլիզի մէջ մեռեր է երիտասարդ հրապարակագիր և մեծ ապագայ խոստացող Վահան Նալպանդեան։

— Աւետիք Ղուկասեան մեռնելով Թիֆլիսի մէջ 133,000 ռուբլի կտակեր է բարեգործական նպատակներով։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն յունուար 18ին կը հեռագրեն որ Օխրիտայի գաւառին մէջ մեծ ընդհարում մը տեղի ունեցեր է պուլկար հրոսախմբի մը և թուրք զինուորներու միջեւ։

— Լօնտօնէն կը հեռագրեն որ յունուար 19ին „Տէյլը Թէլէկրաֆ“ թերթը նախայօդուած մը հրատարակեր է որով Սուլթանին խորհուրդ կուտայ շտապել Ռուսիոյ, Աւստրիոյ և Ֆրանսայի առաջարկած բարենորոգումները գործադրել, որովհետեւ Անգլիան ալ անոնց հետ համաձայն է։

— Բարիզի դեսպան Միւնիր պէյ Պոլիս կանչուեր է թէ Տամատ փաշայի դիակի խնդրոյն և թէ ֆրանսական դեղին գրքի վասին Սուլթանին բացատրութիւններ տալու համար։

— Պուլկարիոյ կաթոլիկ եպիսկոպոսը որ այժմ Հռոմ կը գտնուի իր մէկ տեսակցութեան մէջ յայտարարած է որ Մակեդոնիոյ ընդհանուր ապստամբութիւնը անխուսափելի է և շուտով պիտի պայթի։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Փետրուարը կը մօտենայ բայց Մակեդոնիոյ վիճակը դեռ նոյնն է. Թուրքիա կը պատրաստուի պատերազմի։ Ռուսիա, Աւստրիա և Ֆրանսա դեռ բան մը ըրած չունին ի նպաստ Մակեդոնիոյ։

Պուլկար կառավարութիւնը երկու կրակի մէջ մնացեր է։ Ներքին գործոց նախարար պ. Լիւտսկանոֆ ճամբորդութեան մը սկսեր է դէպի սահմանագլխին նահանգները, կըսուի որ նախարարը մօտիկէն կուզէ ծանօթանալ փախստական Մակեդոնացիներու նիւթական և հոգեկան վիճակին հետ։

ՌՈՒՍԻԱ

Օտէսայէն կը գրեն որ հոն ռուսները պատերազմական պատրաստութեան մէջ են։

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի մամուլին և քաղաքական շրջանակներուն մէջ վիճաբանութեան մեծ նիւթ դարձած է նախարարապետ Գոմբին յայտարարութիւնը. թէ ամեն ժողովրդի համար կրօնք մը պէտք է։

Գոմբ այս միտքը արտայայտած է եկեղեցին պետութենէն բաժնելու առաջարկին դէմ։ Ֆրանսայի արմատականները դժգոհ են Գոմբի այդ յայտարարութենէն։

ՁՈՒՆԴՐԱՅԼԻՔ

Զուիցերիայէն մեզ գրկած են Թումայեանին 15 որը տանող պաղատելիին այցքարտը, որը միայն զուարճութեան նիւթ կրնայ դառնալ։

Ահաւասիկ այդ քարտը։

Ցիսուսը կը սիրեմ՝
Մարտիրոս Փիրանեան
Ծառայ Ցիսուսի Քրիստոսի։

Այս խենթերն են որ մեր որբերը պիտի կրթեն։

ՀԱՑ ՄՍԱ ԱՇՍԱՌԱՆՈՑ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԹԱՆԵԱՆԻ

Պալըզ բազար անկիւնի խանութը. թիւ 7

Կը ծախենք կովի, քըվբրճքի միս, գեր և մասնաւորապէս լաւտեղեր արածուած կենդանիներ կը մորթենք և շարունակ թարմ միս պատրաստ կը գտնուի մեր խանութը ամէն ժամանակ. Գին դիւրամատչելի և ուղիղ կշիռ։

3

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի մեր բաժանորդներէն, որոնք դեռ իրենց պարտքերը չեն վճարած, շտապեն մինչեւ փետրվար 1 ը հաշիւնին մաքրել և զմեզ չ'ստիպել օրէնքի ուժին դիմելու։

ՔՈՒՉԱԿ

Նահապետ Քուչակի տաղերը պարունակող գիրքը որուն կցուած է նաեւ Ա. Զօպանեանի մէկ ընդարձակ ուսումնասիրութիւնը, կը ծախուի Զարպհանէլեան գրատունը Վառնա։

Գինն է՝ պարզ թղթէ գիրքին 3 ֆր.
Քուչէ » » 5 »

Կարժէ որ ամէն բանասէր եւ հաւաքականութեան սիրահար անձ ունենայ այս գրքէն որ ճշմարտապէս գրական գոհար մը է։

Ա Ր Մ Է Ն Ի Ա

Լ ի ճ չ ի

(Հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ)

Գրեց

Պ. Տօնապետեան

Գին

2 1/2 շիլին 1ը. 25 կոպ.
3 ֆր. 60 սանթիմ

Դիմել աշխատասիրողին.

117 Կոսնֆիլ Ռօտ
Հէրֆորտ'ս Ռուֆ
Լօնտօն Մ.

Отговорникъ
Мурадъ Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна